



ՄԱՆԿԱՎԱՐԺ



**ԱՂՈԹՔ ԱՌ ԱՍՏՎԱԾ՝
Ի ՀԻՇԱՏԱԿ Հ. ԴԻՆՔԻ**

2014 թ. հունվարի 19-ին լրացավ «Ակու» թերթի խմբագրատան Հրանտ Դինքի մահվան 7-րդ տարելիցը: Մեծ մտավորականը պայքարում էր ճշմարիտ խոսքի, տարիներ ի վեր շարունակվող անարդարությանը վերջ տալու համար: Ժամանակը հոսում է, սակայն կատարվածը մոռացության չի մատնվում. ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս հանրապետության տարբեր քաղաքներում կազմակերպվեցին սգո և բողոքի միջոցառումներ:

Վանաձորի սուրբ Աստվածածին եկեղեցու Նահատակաց պուրակում տեղադրված 1915 թ. Մեծ եղեռնի հուշաքարի մոտ Գուգարաց թեմի հոգևոր դասը՝ թեմակալ առաջնորդ բարձրաշնորհ Տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանի առաջնորդությամբ, կատարեց հոգեհանգստյան կարգ:

Հոգեհանգստի արարողությանը մասնակցեցին նաև Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ուսանողները և դասախոսները՝ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանի գլխավորությամբ:

Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին Հ. Դինքի անմար հիշատակը և աղոթեցին նրա հոգու խաղաղության համար:

Հոգեհանգստյան կարգից հետո ներկաները ծաղիկներ դրեցին եղեռնի զոհերի հիշատակին նվիրված խաչքարին:

Ինչպես նշեց Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանը, մենք պարտավոր ենք չմոռանալ այն դժնդակ և սարսափելի օրերը, որ ապրեցին պոլսահա-

յերը 1915 թ.-ից հետո. «Թուրքիայում ընդհանրապես, մինչև 7 տարի առաջ արգելված էր խոսել ցեղասպանության մասին, և Հրանտ Դինքը հանդիսացավ այն եզակի անձնավորությունը, որ քաջություն ունեցավ բարձրաձայնել ճշմարտությունը 1915 թ.-ին տեղի ունեցածի մասին: Արգելված էր խոսել, բայց որքան կարող էր հայը զսպել իրեն: Թուրքիայում որքան կարող էր թաքցնել հայն իր զգացմունքները, իր արդարության ճիշդ: Հրանտ Դինքը հանդիսացավ այն առաջամարտիկը, որով բացվեց կապանքն այն բոլոր մարդկանց լեզուների, ովքեր ուզում էին արտաբերել, արտասանել, ի վերջո հայտարարել ճշմարտությունը կատարվածի մասին: Ուրեմն, 7 տարի առաջ մահատակված Հրանտը քանդեց բոլոր այն արգելքները, որոնք դրված էին ցեղասպանության հարցում: Եվ փառք նրան, որ քաջությամբ կարողացավ 1915 թ. ցեղասպանության 1,5 մլն մահատակների անունից Թուրքիայում ճշմարտությունն ասել»:

Հիշեցնենք, որ ՎՊՄԻ բանասիրական ֆակուլտետի լրագրության կաբինետն արդեն 6 տարի կրում է Հրանտ Դինքի անունը: Սկսնակ լրագրողների համար մեծ պատիվ է սովորել այդ լսարանում, վստահեցնում է բանասիրական ֆակուլտետի դեկան Ա. Պողոսյանը. «Մեր ուսանողները մշտապես ուսումնասիրում են «Ակու» թերթի հերթական համարները, մասնակցում Դինքին նվիրված դասալսումներին, կազմակերպում այլ ճանաչողական միջոցառումներ»:

Սեփ. լրատվ.

2012-2013 ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ

Անցած տարեվերջին ՎՊՄԻ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը բուհի աշխատակիցներին և ուսանողներին ներկայացրեց 2013 թվականի գործունեության հաշվետվությունը: Ռեկտորը խոսեց հաշվետու ժամանակահատվածում բուհի ձեռքբերումների, հաջողությունների և առաջիկայում սպասվող աշխատանքների մասին:

Այնուհետև տեղի ունեցավ «Լավագույն ուսանող»-«Լավագույն կուրս» մրցույթի հաղթողների պարգևատրման արարողությունը:

Հիշեցնենք, որ այս անվանակարգերում ընտրությունը կատարվում է համաձայն գործող կանոնակարգի:

Այս տարի «Լավագույն ուսանող» անվանակարգում մասնակցեցին պատմաշխարհագրական և մանկավարժության ֆակուլտետները: ՎՊՄԻ ռեկտոր Գ. Խաչատրյանը հայտարարեց հաղթողների անունները՝ Անուշ Փիլոյան (պատմաշխարհագրական ֆակուլտետ, «Իրավագիտություն» մասնագիտություն, 4-րդ կուրս) և Ալինա Մարտիրոսյան (մանկավարժության ֆակուլտետ, «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտություն, 4-րդ կուրս): Նրանք պարգևատրվեցին շնորհակալագրով և խրախուսական նվերներով:

Բանասիրական ֆակուլտետի դեկան Ալբերտ Պողոսյանն այս անվանակարգում պարգևատրեց ֆակուլտետի վերջին հինգ տարիների լավագույն ուսանող Նարինե Հակոբյանին («Օտար լեզու և գրականություն» մասնագիտություն (մագիստրատուրա), 2-րդ կուրս):

«Լավագույն կուրս» մրցույթի հաղթող ճանաչվեցին «Կառավարում» մասնագիտության 2-րդ կուրսը, «Սոցիալական մանկավարժություն», «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա», «Կենսաբանություն», «Մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտությունների 4-րդ կուրսերը:

Այս տարի առաջին անգամ մրցանակաբաշխությանը մասնակից դարձավ նաև ՎՊՄԻ քոլեջը, որտեղ «Լավագույն կուրս» ճանաչվեց «Թարգմանություն և գործավարություն» մասնագիտության 2-րդ կուրսը, իսկ «Լավագույն ուսանող» դարձավ նույն



մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Յովհաննիսյանը:

ՎՊՄԻ հենակետային վարժարանի տնօրեն Սամվել Աղաջանյանը հայտարարեց 2012-2013 ուստարվա լավագույն աշակերտի անունը՝ Ջարուհի Խաչատրյան:

Շնորհակալագրերով պարգևատրվեցին նաև 2012-2013 ուսումնական տարում ուսումնագիտական և հասարակական աշխատանքներում աչքի ընկած ուսանողները:

Ստորև ներկայացնում ենք պարգևատրված ուսանողների անունները. Գևորգ Սիրունյան («Կենսաբանություն» մասնագիտություն, 4-րդ կուրս), Ֆլորա Ամիրբեկյան («Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն, 4-րդ կուրս), Նարեկ Ջաղինյան («Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտություն, 2-րդ կուրս), Ռուզաննա Դավիթյան («Դեղագործական քիմիա» մասնագիտություն, 4-րդ կուրս), Անի Ներսեսյան («Մաթեմատիկա» մասնագիտություն (մագիստրատուրա), 1-ին կուրս), Գոռ Մամուկյան («Ինֆորմատիկա» մասնագիտություն, 4-րդ կուրս), Նարե Հովհաննիսյան («Կրթության կազմակերպում» մասնագիտություն (մագիստրատուրա), 1-ին կուրս), Լիանա Դարչինյան («Բնապահպանություն» մասնագիտություն, 3-րդ կուրս), Մանյա Գալստյան («Իրավագիտություն» մասնագիտություն, 4-րդ կուրս), Հասմիկ Սարյան («Ինֆորմատիկա»

մասնագիտություն, 2-րդ կուրս), Հայկ Ներսիսյան («Կերպարվեստ և գծագրություն» մասնագիտություն, 3-րդ կուրս), Գայանե Գրիգորյան («Կերպարվեստ և գծագրություն» մասնագիտություն, 4-րդ կուրս), Անի Վարդանյան («Երաժշտական կրթություն» մասնագիտություն, 3-րդ կուրս):

Շնորհակալագրերի արժանացան նաև բազմաթիվ մրցաշարերում հաղթող ճանաչված մարզիկները: 2012-2013 ուստարվա «Լավագույն մարզիկ» ճանաչվեց «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության 3-րդ կուրսի (հեռակա) ուսանող Տիգրան Կիրակոսյանը: Լավագույն մարզական ցուցանիշների համար պարգևատրվեցին նաև Էդուարդ Հակոբյանը («Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտություն, 2-րդ կուրս), Աննա Քարահանյանը («Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտություն (հեռակա), 2-րդ կուրս), Արամայիս Բաղդյանը («Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտություն (հեռակա), 5-րդ կուրս):

Լավագույն ճանաչված ուսանողների և կուրսերի պարգևատրման արարողությունը ընդմիջվում էր արվեստի ամբիոնի ուսանողների գեղեցիկ կատարումներով:

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս ՎՊՄԻ արհկոմի և մշակույթի կենտրոնի կողմից կազմակերպված մրցանակաբաշխությունն անցավ ջերմ մթնոլորտում:

Սեփ. լրատվ.

ՎՊՄԻ գրականության ամբիոնի նախածեռնությանը վերջերս տեղի ունեցավ բանաստեղծ, Հայաստանի գրողների միության անդամ Ռազմիկ Պողոսյանի «Թռչունների պատարագը» գրքի քննարկումը:

Գրքում զետեղված են հիմնականում վերջին տարիներին գրված ստեղծագործություններ: Հեղինակի հավաստմամբ՝ վերնագիրն իր խորհուրդն ունի. «Ես ամեն օր թռչունների սաղմոսների վկան եմ լինում. հետևելով նրանց ուրախ խաղին՝ մտածեցի՝ թռչուններն էլ, որ բնության մի մասնիկն են, ունեն իրենց Աստվածը և մարդկանց նման պատարագ են անում»:

Գրականության ամբիոնի վարիչ, Բ. Գ. Ք., դոցենտ Վալերի Փիլոյանը նշեց, որ Ռազմիկ Պողոսյանը 1960-ական թվականների գրողական այն սերնդի ներկայացուցիչներից է, որի մեծագույն արժանիքը ներքին ազատության ձգտումն էր, ճշմարտության որոնումը:

Ժողովածուի մասին զեկուցմամբ հանդես եկավ գրականության ամբիոնի դասախոս, Բ. Գ. Ք., դոցենտ Գայանե Մալումյանը: «Դասական ավանդույթին հավատարիմ և իր քնարին երբեք չդաված մեր բանաստեղծն է Ռազմիկ Պողոսյանը, որի գրական ճանապարհին հետևել ենք տասնամյակներ շարունակ: Տարիքային սահմանագիծ կա, որ ստիպում է անընդհատ հետ նայել, հուշերի անմշուշ ճանապարհով գնալ դեպի մանկության հեքիաթը և հին օրերի գուրգուրանքի կարոտով հոգնած հոգին օրորել այդ հեքիաթի նվազներով: Մտորումների խաչուղիներում բանաստեղծը նկատում է ան-



հավանականը՝ զուգահեռները հատվել են արդեն: Իսկ հավանականը գիտակցվում է «Թախիծով մի խոր, հեզանաքով թեթև. Հեռաստանները քոնը չեն արդեն»: Եկել է քարերը հավաքելու ժամանակը...», – ասաց բանախոսը:

Գրականության ամբիոնի դասախոս Լուսինե Սահակյանը նկատեց, որ Պողոսյանի բանաստեղծությունը սահյանական Հայաստանի շնչառությունը կա և հայկական ոգու բաբախումը. «Գեղարվեստական գտնված պատկեր ու հուզախառն շնչառություն է դառնում ազգային ցավը.

Իմ բարեկամին ի՞նչ ասեմ, լառ, Այն ցավի մասին անվերջ և անհուն, Որի դեմ Աստված գլխարկ է հանում, Որը երբևէ չես պատմի լալով:

Գրքի «Աղոթք լեռներում» բաժինը վերակերտում է այն երկրի պատմությունը, որի համար հուզվում ենք, բայց որով ամեն օր կարող ենք հպարտանալ, որի համար ծնկածալ աղո-

թում ենք, որտեղ ցորյան արտերի ծուփ-ծփանքի մեջ իրար են խառնվում նոր թխված հացի և բառ ու տողերի բուրմունքները»:

Իր գրչընկերոջ ստեղծագործությունների մասին խոսեց նաև ՀԳՄ Լոռու մարզային բաժանմունքի նախագահ Մանվել Միկոյանը. «Ռ. Պողոսյանն այն բացառիկ գրողներից է, որ այս տարիքում ստեղծագործական նոր գույն է բերում, ինչը խոսում է պոետական մեծ էներգիայի, ասելիքի առատության մասին»:

Քննարկմանը ներկա ուսանողներն անկեղծ գրույց ունեցան բանաստեղծի հետ, նրան տարբեր հարցեր ուղղեցին: Գեղեցիկ խոսքերից և բարեմաղթանքներից հուզված Ռ. Պողոսյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման նախածեռնողներին և բոլոր ներկաներին. «Ես գիտեի, որ լավ պոետ եմ, բայց որ այսքան լավ՝ չգիտեի», – հուճորով եզրափակեց նա:

ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում հունվարի 15-ին տեղի ունեցավ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության (մագիստրատուրա, հեռակա) 3-րդ կուրսի ուսանողների ավարտական քննությունը:

Հեռակա ուսուցմամբ առաջին մագիստրանտ շրջանավարտները գերազանց հանձնեցին պետական քննու-

թյունը: Կուրսի 6 ուսանողներից 5-ը թեզը պաշտպանեց «գերազանց», մեկը՝ «լավ» գնահատականով:

Քննության արդյունքներից տպավորված էր ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը, որը նախագահում էր մեծատաղանդ գրող Հրանտ Մաթևոսյանի եղբայրը՝ Բ. Գ. Քանլետ Մաթևոսյանը: Քննության ընթացքին հետևում էին նաև բանասիրական

ֆակուլտետի դեկան Ալբերտ Պողոսյանը, հայոց լեզվի ամբիոնի վարիչ Հասմիկ Հարությունյանը, գրականության ամբիոնի վարիչ Վալերի Փիլոյանը, դասախոսներ, ուսուցիչներ:

Հանձնաժողովի նախագահի հավաստմամբ՝ ուսանողները մագիստրոսական թեզում հանգամանորեն ներկայացրել են նյութը, ինչպես նաև սպառիչ



Մեր իրավագետները՝ հանրապետական մրցույթի հաղթող



Արդեն երրորդ տարին է՝ «Մտավոր սեփականության իրավունքի կենտրոնի» կողմից հանրապետության տարբեր բուհերի իրավագիտական ֆակուլտետների ուսանողների միջև կազմակերպվում է «Մտավոր սեփականության իրավունքի դատախաղ-մրցույթ»:

Դատախաղ-մրցույթն ուսանողներին զինում է գործնական գիտելիքներով մտավոր սեփականության իրավունքի բնագավառում, կարևորում մտավոր սեփականության իրավունքի դերը պետության տնտեսական զարգացման համար:

Այս տարի մրցույթն անցկացվեց Հայաստանի Ամերիկյան համալսարանում, որին մասնակցություն ունեցան նաև Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ուսանողները: ՎՊՄԻ թիմը կազմված էր «Իրավագիտություն» մասնագիտության 2-րդ և 4-րդ կուրսերի 5 ուսանողներից (Սոնա Մկրտչյան, Վրույր Այվազյան, Հռիփսիմե

Գևորգյան, Լիլիթ Գոգինյան, Գոհար Մարկոսյան):

Թիմի հետ մրցույթի նախապատրաստական աշխատանքներ են կատարել փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոսներ Դավիթ Հակոբյանը և Սոնա Բուդաղյանը:

Մրցույթի դատավորների կազմում էին գործող դատավորներ, մտավոր սեփականության իրավունքի բնագավառի մասնագետներ և իրավաբաններ: Գրավոր աշխատանքների և բանավոր ելույթների արդյունքում դատավորներն ընտրեցին հաղթող թիմերին:

Անցնելով եզրափակիչ փուլ՝ ՎՊՄԻ թիմը գրավեց մրցանակային 2-րդ տեղը և արժանացավ պատվոգրերի, դրամական պարգևի:

Հիշեցնենք, որ նախորդ տարի ևս ՎՊՄԻ իրավաբանների թիմն արժանացել էր դատավորների բարձր գնահատականին և մրցանակային տեղ զբաղեցրել:

3 պատասխաններ տվել հնչած բոլոր հարցերին: Աշխատանքներում

առավել ուշագրավ էին գրողներ Հ. Մաթևոսյանին և Ջ. Խալափյանին նվիրված ուսումնասիրությունները. «Ցանկալի է, որ լեզվի և գրականության նման շքերթ լինի և՛ ընթացիկ, և՛ ավարտական բոլոր քննությունների ժամանակ»:

Բանասիրական ֆակուլտետի դեկան Ա. Պողոսյանն այն կարծիքին է, որ պետք է կտրել կարծրատիպը, թե հեռակա ուսուցման համակարգում չկան առաջադեմ ուսանողներ. «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության (մագիստրատուրա,



հեռակա) առաջին շրջանավարտների ցուցաբերած արդյունքները անչափ ուրախալի են: Ներկայացված բարձրորակ աշխատանքները ևս մեկ անգամ վկայում են, որ հեռակա համակարգում ուսանելով ևս հնարավոր է սովորել բարձր առաջադիմությամբ և դառնալ որակյալ մասնագետ»:

Ունենալով նման ցանկալի արդյունքներ՝ այս մասնագիտությամբ մագիստրատուրայի ընդունելությունը հեռակա համակարգում նախատեսվում է շարունակել:

Սեփ. լրատվ.

ՎՊՄԻ-ԻՑ՝

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲՈՒՅԵՐ



Բարձրագույն կրթության եվրոպական միասնական տարածքի ստեղծումը Բոլոնյան գործընթացի հիմնական նպատակն է, որին ներգրավված բուհերի ցանկում ակտիվ է նաև Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտը:

ՎՊՄԻ-ում իրականացվող բարեփոխումները միտված են ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, կրթության որակի բարձրացմանն ու համապատասխանեցմանը եվրոպական կրթական չափանիշներին: Ուսանողների շարժունությունն ապահովելու համար ՎՊՄԻ-ն որպես միջազգային համալսարանական կոնսորցիումի անդամ ներկայումս ներգրավված է «Էրազմուս Մունդուս» ծրագրի 4 մախագծերում: Նման ակտիվ ներգրավվածությունը հնարավորություն է տալիս ՎՊՄԻ ուսանողներին կրթությունը շարունակել եվրոպական բուհերում և մուտք գործել գլոբալ աշխատաշուկա: Ծրագրի շրջանակներում ուսանողները կարող են դիմել ոչ միայն բակալավրիատի, այլև մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, ինչպես նաև հետթեկնածուական հետազոտության մակարդակներով:

Այս պահին ՎՊՄԻ 12 ուսանողներ իրենց կրթությունը շարունակում են եվրոպական բուհերում (Ռումինիայի Յախի քաղաքի «Ալեքսանդրու Իոան Կուզա», Լեհաստանի Պոզնան քաղաքի «Ադամ Միցկիչ», Ֆրանսիայի Մոնպելյե քաղաքի թիվ 2 համալսարաններ):

ՎՊՄԻ պրոֆեսորադասախոսական կազմը մշտապես կապի մեջ է արտերկրում գտնվող իր ուսանողների հետ: Մեզ նույնպես հաջողվեց գրուցել նրանց հետ, լսել եվրոպայում իրենց կրթությունը շարունակող ուսանողների տպավորություններն ու կարծիքները:

Պատմաաշխարհագրական ֆակուլտետի «Պատմություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Յենի Մատինյանը նշեց, որ արդեն մեկ կիսամյակ է ուսանում է Ռումինիայի Ալեքսանդրու Իոան Կուզա համալսարանում, որտեղ մինչ այցն ունեցած բոլոր սպասելիքներն ավելի քան արդարացան. «Առաջնահերթ կարևորում են օտար լեզուների մասնագիտական կիրառությունը, նոր օտար լեզու՝ ռումիներեն սովորելը, գործնականի վրա հիմնված փորձի ձեռք բերումը և եվրոպական կրթական համակարգի համեմատությունը հայկականի հետ: Դասերն անցնում են բավականին հետաքրքիր (չնայած այն դժվարություններին, որոնք կապված են ռումիներեն լեզվով անցկացվող դասախոսությունների հետ), դասավանդում են Ռումինի-

նիայում և անգամ եվրոպայում հայտնի քաղաքական գործիչներ և գիտնականներ»:

Ուսանողները հնարավորություն ունեն նաև ուսումնասիրելու տեղի մշակույթը, կենցաղն ու բարքերը, ինչպես նաև օտարերկրացիներին ներկայացնելու մեր ազգային առանձնահատկությունները: Ի դեպ, նրանք առիթը բաց չեն թողնում նշելու, որ հայ են, եկել են ՎՊՄԻ-ից և որ հպարտ են դրա համար:

Բանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության (հեռակա) 5-րդ կուրսի ուսանող Ալբերտ Դանիելյանի հավաստմամբ՝ առօրյան շատ հագեցած է՝ դասախոսություններ, քննարկումներ, ժանրություններ, պրոֆեսորադասախոսական կազմի հետ անմիջական շփում և այլն. «Դասերից դուրս նույնպես ծանրանալու պատճառ չի լինում, քանի որ բավականին ժամանակ է, ինչ շփվում ենք համակուրսեցիների հետ, քաղաքում կան բազմաթիվ տեսարժան վայրեր, դրանից զատ ներկա ենք գտնվում մեր հայկական՝ «Սուրբ Աստվածածին» եկեղեցուն մատուցվող պատարագներին և եկեղեցական տոներին»:

Պատմաաշխարհագրական ֆակուլտետի «Կառավարում» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Նառա Սարգսյանը հավելեց. «Ուսանողների շարժունությունն իսկապես եզակի հնարավորություն է, որ առավել բազմակողմանիորեն զարգանանք՝ համադրելով թե՛ հայաստանյան և թե՛ արտասահմանյան բուհերի տարիներով կուտակված փորձն ու գիտելիքների պաշարը: Այստեղ առավել ուշադրություն է դարձվում նյութի գործնական կիրառմանը, քան դրա տեսական ուսուցմանը, ուսանողն այստեղ ավելի ազատ է իր կարծիքն արտահայտելու, նրան աջակցում են դասախոսները՝ մշտապես պատրաստ լինելով քննարկել ցանկացած նոր գաղափար և նպաստել դրա զարգացմանը. օգտագործվում է բացառապես նոր ամերիկյան գրականություն՝ հագեցած վերջին շրջանում կատարված իրողություններով: Այստեղ գիտությունը քայլում է ժամանակին հանընթաց»:

Արտերկրում իրենց կրթությունը շարունակող ուսանողներն արդեն կարող են խոսում հայրենիքի, հարազատ բուհի մասին, սակայն վստահեցնում են, որ եվրոպական արժեքներից վերցնելու են ամենայն դրականը՝ զերծ մնալով բացասական երևույթներից:

Նարինե ՆԵՐՍԵՍՅԱՆ

Հարգելի՛ գործընկեր
Հրավիրում ենք Ձեզ մասնակցելու

«Լեզուն և գրականությունը միջնակութային հաղորդակցության համատեքստում»

III միջազգային գիտաժողովին

2014 թ. հոկտեմբերի 9-10, ՀՀ, ք. Վանաձոր

Գիտաժողովի նպատակը.

1. որոշել գիտական հետազոտությունների և գործնական մշակումների հրատապ և հեռանկարային ուղղությունները գրականագիտության և լեզվաբանության ասպարեզում, ինչպես նաև լեզուների և գրականության դասավանդման ոլորտում,

2. գիտական փորձի լայն փոխանակություն, գիտության և պրակտիկայի ինտեգրման ուղիների որոնում:

Գիտաժողովի աշխատանքների ուղղությունները.

1. **Լեզվաբանություն**

- Լեզուն որպես մշակույթի հայելի
- Լեզուն որպես մշակույթի հասկացույթ
- Գենդերային լեզվաբանություն
- Էթնոլեզվաբանություն
- Լեզվային աշխարհապատկերում
- Լեզվի պատմություն
- Լեզվի հաղորդակցական տեսանկյուններ

2. **Գրականագիտություն**

- Գրականության պատմություն և տեսություն
- Գրականությունը մշակույթի համատեքստում
- Գրականությունը որպես մշակութային հաղորդակցության գործոն

Դիցույթը որպես արքետիպ

Համաշխարհային գրականության համեմատական ուսումնասիրություն

Գրական տեքստերի դիցաբանական խոսույթը (դիսկուրսը)

3. **Լեզվի և գրականության դասավանդում**

Լեզվի և գրականության դասավանդման նորարարական մեթոդներ

Բոլոնյան գործընթացի շրջանակներում լեզվի գործոնի դերը կրթության համակարգում

Միջնակութային կոմպետենցիայի ձևավորում

Լեզվաբանական կրթության տեղեկատվություն

Բանասիրական առարկաների դասավանդման մեթոդական տեսանկյունները

4. **Թարգմանության տեսություն և պրակտիկա**

Թարգմանության մեթոդաբանություն

Թարգմանության արդի խնդիրներ

Գեղարվեստական տեքստը որպես թարգմանության առարկա

Թարգմանության լեզվաբանական տեսանկյունները:

Մանրամասները տե՛ս ինստիտուտի կայքում՝ vspi.am



ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՈՆԱՀԱՆԴԵՍԻՆ՝ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Թե՛ժ լեռան ստորոտում փետրվարի 8-ին տեղի ունեցավ «Լոռվա ձմեռ-2014» ավանդական մարզատոնահանդեսը, որը լոռեցիները նշում են արդեն 44-րդ անգամ: Այն հրաշալի հնարավորություն է՝ բնության գրկում վայելելու ձմեռն ու մասնակցելու կազմակերպվող բազմաթիվ մարզական միջոցառումներին:

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս ՎՊՄԻ պրոֆեսորադասախոսական կազմն ու ուսանողներն անմասն չմնացին միջոցառումից: Բուհի արհկոմի, մշակույթի կենտրոնի և ուսանողական խորհրդի համատեղ ուժերով մի շարք ուսանողներ մասնակցեցին մարզատոնահանդեսին, ակտիվու-

թյուն ցուցաբերեցին կազմակերպված մրցույթներին, խաղերին: Արհկոմի նախագահ Ռ. Գրիգորյանը, մշակույթի կենտրոնի ղեկավար Գ. Հարությունյանը, ֆակուլտետների ղեկանները և դասախոսները հետևողական էին ուսանողների անվտանգությունն ապահովելու խնդրում:

Նշենք նաև, որ ուսանողների սննդի ծախսն այս անգամ ևս հոգացել էր բուհը: Ուսանողները նման ակտիվ հանգստից հետո թարմ ուժերով վերսկսեցին արձակուրդներով ընդմիջված ուսումնական գործընթացը: Նրանց հիշողության մեջ ուսանողական կյանքի և մեկ անմոռանալի օր ավելացավ:

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ՝ ԲՈՒՅՈՒՄ

Օրերս Վանաձորի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան հ. 1 հիմնական դպրոցի ութերորդ դասարանի մի խումբ աշակերտներ (դասղեկ՝ Ն. Գրիգորյան) հյուրընկալվեցին ՎՊՄԻ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում: Աշակերտները հանդես եկան «Մաթեմատիկան և արվեստը» խորագիրը կրող միջոցառումով: Հետաքրքիր փաստեր ներկայացրին մաթեմատիկայի և արվեստի կապի վերաբերյալ՝ նշելով, որ թվերն են դեկավարում աշխարհը, և որ ողջ բնությունը շնչում է թվերի ոգով:

Հանդիպմանը ներկա էին նաև բուհի այլ ֆակուլտետների ուսանողներ և դասախոսներ:

Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան Ս. Խառատյանը, կարևորելով բուհ-դպրոց կապը, շնորհակալություն հայտնեց աշակերտներին՝ հետաքրքիր ու բովանդակալից միջոցառման համար և պարտավորեցրեց ուսանողներին փոխադարձ այցով ու նմանատիպ միջոցառմամբ հանդես գալ դպրոցում:

Ավանդույթ դարձող հանդիպումների շարքում, ի դեպ, այս միջոցառումն իր բնույթով միակը չէր: «Բարին արա» համաքաղաքային ակցիայի շրջանակներում նույն դպրոցի VI

դասարանի աշակերտները (մայրենիի ուսուցիչ՝ Ս. Սարգսյան) և ՎՊՄԻ ուսանողները բուհի դահլիճում կազմակերպել էին ևս մեկ դիտարժան միջոցառում՝ նվիրված մեծ բարերար



Շառլ Ազնավուրին:

Միջոցառման ավարտին շնորհակալական խոսքով հանդես եկան բանասիրական ֆակուլտետի դեկան Ա. Պողոսյանը և հ. 1 հիմնական դպրոցի տնօրեն Գ. Հովվիյանը՝ ընդգծելով, որ համանման հանդիպումներով ավելի է ամրապնդվում բուհ-դպրոց կապը:

2. ԹԱՐԽԱՆՅԱՆ

Վանաձորի հ. 1 հիմնական դպրոցի փոխտնօրեն



ԲԱՆԱԿԸ ՄԻԱՅՆ ԶԻՆՎՈՐՆԵՐԸ ՉԵՆ

Բանակը միայն զինվորները չեն. բանակը մենք ենք, մեր ամուր ոգին, մեր կամքը, մեր գիտելիքը, մեր սերը հայրենիքի հանդեպ: 2014 թ. փետրվարի 6-ին այսպիսի խոսքեր էին քնածուն վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատության փոքրիկ դահլիճում:

ՎՊՄԻ մանկավարժության ֆակուլտետի «Մանկավար-

ժություն և հոգեբանություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողներ Հերմինե Ասատրյանը, Սարգարիտա Բոշյանը, Արաքսյա Սիմոնյանը, Աննա Պողոսյանը, Գայանե Շիրոյանը, Սուսաննա Մացակյանը և Քրիստինե Ղարիբյանը հայրենասիրության թեմայով միջոցառում էին կազմակերպել նշված գիշերօթիկ հաստատության կրտսեր տարիքային խմբի երեխաների հետ՝ նվիրված հայոց բանակի կազմավորման 22-րդ տարեդարձին:

«Հայրենասիրությունը չի սկսվում և չի ավարտվում զինվորական ծառայությանը. հայրենիքի հանդեպ սերը երեխայի մեջ պետք է ձևավորել դեռևս շատ վաղ հասակից», - նշում էին ուսանողները:

Միջոցառումը, կարծում ենք, ծառայեց իր նպատակին: Մեր ուսանողները կարողացան երեխաների մեջ սերմանել այն ամուր ոգին ու կամքը, որը մեզ փրկել է դարեր շարունակ, որը օգնում է մեզ պայքարել հիմա և անվտանգ դարձնել մեր ապագան:

Հերմինե ԱՍԱՏՐՅԱՆ

«Մանկավարժություն և հոգեբանություն», 4-րդ կուրս



ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՎՊՄԻ գրադարան

1. Ս. Ղանթարջյան և ուրիշներ, Կառավարման և գործարարության ընտրովի հարցեր, Երևան, 2005
2. Գ. Ս. Թումանյան, Ազարակ, 1, վաղ բրոնզեդարյան բնակավայրը, Երևան, 2012
3. Վ. Սարգսյան, Պատմության սկիզբն ու շարունակությունը: Պատմվածքներ, Երևան, 2009
4. Ազգային և կրոնական փոքրամասնությունները ՀՀ-ում, Երևան, 2010
5. Ռ. Միրզոյան, Արցախյան հերոսապատում, տարեգրություն, Երևան, 2013
6. Ս. Բզնունի, Վ. Ժամկոչյան, Միջուկային ռեակտորների տեսության հիմունքները, մաս 1, 2, Երևան, 2013
7. Յու. Վարդանյան, Էլեկտրադինամիկա, մաս 1, Երևան, 2013
8. Լենդրուշ Ալոյան, «Մշակը» 1983-1913 թթ., Երևան, 2013
9. Վ. Սարգսյան, Կենսամատենագիտություն, Երևան, 2013
10. Կենսաբանական թաղանթների կենսաֆիզիկա, կենսաէներգետիկա և կենսաքիմիա, Երևան, 2012
11. Ռ. Գևորգյան, Մեծ քիմիայի «առեղծվածը», Երևան, 2010
12. Ռասել Բերտրան, Փիլիսոփայության պրոբլեմները, Երևան, 2004
13. Շևալիե Մարիա-Աննա, Կիլիկյան Հայաստանի և հոգևորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից, Երևան, 2013
14. Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում, Երևան, 2013
15. Հ.Գ. Մանուչարյան, Հայ քաղաքական մտքի պատմություն, Գիրք Ա, Միջին դարեր, ԵՊՀ, Երևան, 2013
16. Ի. Պրիվալով, Անալիտիկ երկրաչափություն, ուս. ձեռն., ԵՊՀ, 2013
17. Է. Մեծելայտիս, Մարդը, Գասպրինտ, Երևան, 2013
18. Զ. Սկրոչյան, Լ. Մնացականյան, Ս. Միրիմանյան, Անգլերենի դասագիրք էկոլոգիա ուսումնասիրող ուսանողների համար, Ասողիկ հրատ., Երևան, 2007
19. Ս. Ռ. Թումանյան, Անգլերենի դասագիրք ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի և մեխանիկայի ֆակուլտետների մագիստրատուրայի ուսանողների համար, ԵՊՀ, Երևան, 2006
20. Ս. Սարգսյան, Արամ Խաչատրյան, Научно-справочное издание, НАН РА, Ереван, 2004
21. Ա. Գևորգյան, Искусство быть, Ритмы двадцатого столетия, книга 1, изд. "Гитутюн", НАН РА, 2003
22. Т.В. Блаватская, Из Истории греческой интеллигенции эллинистического времени, Наука, Москва, 1983
23. Э. А. Зограбян, Шарур-Нахичеван в 1918-19 гг., Ереван, 2012
24. Гр. Мирзоян, Н. Гончар, Почему суд по факту геноцид армян Турция призывает доверять историкам, Ереван, 2012
25. А. Баян и др., Путешествие по Армении, Ереван, 2013
26. А. С. Манукян, Некоторые проблемы межгосударственных и межкультурных отношений на Южном Кавказе, Ереван, 2012
27. В. С. Мухина, Отчужденные: Абсолют отчуждения, Москва, 2009
28. Н. Саркисян, Особенности сохранения этнической самобытности армян в полиэтнической среде Дагестана, Ереван, 2009
29. Э. Петросян, Праздники армян в контексте европейской культуры, Ереван, 2011
30. К. Свасьян, Ницше, Две вариации на одну судьбу, Ереван, 1999
31. Г. А. Багратян, Общество и государство, Ереван, 2000
32. А. Авакян, Из истории художественной жизни Армении, Ереван, 2002

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման դասընթացի («Ինֆորմատիկա» առարկայից) մասնակիցներս խորին շնորհակալություն ենք հայտնում բուհի ղեկավարությանը, դասընթացի կազմակերպիչներին, Նունե Խուբլարյանին և Նելլի Մանուչարյանին՝ անհրաժեշտ հմտություններին տիրապետելու և ձեռք բերած գիտելիքների համար:

«Ապագա մանկավարժ»

երկաթաթերթ

Վկայական՝ 727

2001, ՀՀ, Վանաձոր,

Տիգրան Մեծի 36

Էլ. փոստ՝ mankavarzh@mail.ru

Հիմնադիր՝ ՎՊՄԻ

Հրատարակիչ՝

«Ապագա մանկավարժ»

երկաթաթերթի խմբագրություն

Տպագրանակը՝ 100

Տպագրվել է ՎՊՄԻ-ի տպարանում

Խմբագիր՝ Լևոն ՍԱՐԳՍՅԱՆ

Պատասխանատու՝ Անի ԽԱՉԱՏՐՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝ Աշխեն ԳԱԼՍՅԱՆԻ

Լուսանկարները՝ Գևորգ ԽԱՉԻԿՅԱՆԻ